ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

МАРЗПЕТ АРМАВИРА

<< 28 >> -------06-------2016թ. N ----------

***Shabat.am լրատվական գործակալության***
***լրագրող Մարիամ Մելքումյանին***

***Հարգելի տիկին Մելքումյան***

Ի պատասխան Ձեր 24.06.2016 թվականի N EBFD-16BE-D04C գրության՝ հայտում ենք, որ սույն թվականի մայիսի 12-ին, 18-ին, 23-ին, հունիսի 4-ին և 5-ին տեղացած կարկտահարության հետևանքով վնասվել են ՀՀ Արմավիրի մարզի 26 համայնքի պատկանող 5254.6 հա պտղի, խաղողի, բանջարեղենի և բոստանի տարածություն:

Կարկտահարությունից առավել տուժել են Գետաշեն, Տանձուտ, Նալբանդյան, Եղեգնուտ, Շենավան, Փշատավան և Ջանֆիդա համայնքները: Կարկտահարության հնարավոր վնասները հետագայում մեղմելու նպատակով առաջիկայում մարզի թվով 5 համայնքում կտեղակայվի ևս 12 հակակարկտային կայան:

Համայնքային հանձնաժողովների կողմից գույքագրվել են կարկուտի հասցրած վնասները, որը մարզային հանձնաժողովի կողմից ամփոփվել և ներկայացվել է ՀՀ տարածքային կառավարման և զարգացման, ինչպես նաև ՀՀ գյուղատնտեսության նախարարություններ: Համապատասխան գերատեսչությունների ղեկավարները կարկուտի հասցրած վնասների ամփոփ տվյալները ներկայացրել են ՀՀ վարչապետին:

***ՄԱՐԶՊԵՏ՝*** ***Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ***

***Կատ.՝ Փ.Կարապետյան***
***Ա. Այվազյան***